ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Պետրոս Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար,

Արմեն Դանիելյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (ք.Մոսկվա), 2025 թվականի հունվարի 9-11-ը

3. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ հանդիպելու նպատակով

5. Քննարկված թեմաները.

Քննարկվել են երկու մարմինների՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության միջև համագործակցության ուղղությունները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկման ընթացքում կարևորության են արժանացել թվայնացման ոլորտում կողմերի ակտիվ համագործակցության, էլեկտրոնային հավաստագրերի փոխադարձ ճանաչելիությանն առնչվող հարցերը

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ռուսական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել թվայնացման ոլորտում տեղեկատվական համակարգերի, մասնավորապես՝ «Արմֆիտոս» և «Արգուս-ֆիտո» համակարգերի արդիականացման և ինտեգրման

աշխատանքներին ռուսական կողմի աջակցության հարցերը, ինչպես նաև ոլորտին առնչվող խնդիրներ ի հայտ գալու պարագայում՝ աշխատանքային կարգով դիտարկել դրանց լուծման հնարավոր տարբերակները, իսկ դրանց կարգավորման անհնարինության դեպքում՝ կազմակերպել քննարկումներ ղեկավար կազմի մակարդակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. **14.01.2025թ.**